ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 19.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/54

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Ազդ» ՍՊԸ-ի 06.04.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«ԱԶԴ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Ազդ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Բողոքաբեր) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 06.04.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ մրցույթ): Մինչև մրցույթի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը «Ազդ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 17.03.2018թ. ներկայացվել է բողոք, որով վիճարկվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ը՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը:

Ներկայացված բողոքով «Ազդ» ՍՊԸ-ն գտել է, որ «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից սույն մրցույթի հրավերը, մասնավորապես՝ 1, 2, 4, 5, 6 և 8 չափաբաժինների «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը» կազմելիս՝ թույլ է տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերի պահանջների խախտում: Մասնավորապես, նշված չափաբաժինների համար ներկայացված գնման առարկայի բնութագրերը ներկայացված չեն ամբողջական, բացակայում է մատուցվող ծառայությունների հստակ նկարագրությունը, դրանք ներկայացված չեն բավարար ճշտությամբ, որը հնարավորություն չի տալիս մասնակիցներին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան, ինչն էլ իր հերթին բարդեցնում է առաջարկվող ծառայության գնի որոշումը, իսկ հետագայում նաև պայմանագրային պարտավորությունների կատարումը, ինչը արդյունքում սահմանափակվելու է մասնակցության իրավունքը գնման գործընթացին:

«Ազդ» ՍՊԸ-ի 17.03.2017թ. ներկայացրած բողոքը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից բավարարվել է և 26.03.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/42 որոշմամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը պարտավորեցրել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին հրավերում կատարել համապատասխան փոփոխություններ՝ 1, 2, 4, 5, 6 և 8 չափաբաժինների «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը» մեջ՝ այն համապատասխանեցնելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

«ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 26.03.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ ի կատարումն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 26.03.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/42 որոշման, հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել կատարել համապատասխան փոփոխություններ հրավերում: Սակայն, դրա հետ միաժամանակ նույն նիստի թիվ 3 արձանագրության 1.2-1.6 կետերով կայացրած որոշումներով գնահատվել են մասնակիցների հայտերը և որոշվել առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներ:

«ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2018թ. մարտի 26-ի որոշմամբ հրավերում կատարված փոփոխությունների վերաբերյալ հայտարարությունը (կցվում է) հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում 26.03.2018թ.:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բաց մրցույթի հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից, իսկ փակ մրցույթի դեպքում՝ հրավերում կատարված փոփոխությունները հրավեր ստացած մասնակիցներին տրամադրվելու օրվանից:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Այսպիսով, ինչպես արդեն նշվել է, «Ազդ» ՍՊԸ-ի կողմից մինչև «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի հրավերով նախատեսված հայտերի ներկայացման վերջնաժամկետը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 17.03.2018թ. ներկայացված բողոքով Ընկերությունը խնդրել էր հրավերում կատարել այնպիսի փոփոխություններ, որի արդյունքում գնման առարկան կներկայացվեր բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին ճշգրիտ ընկալել այն, առկա լիներ դրա ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Ներկայացված բողոքը, Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի ուժով՝ ինքնաբերաբար կասեցրել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթը:

Նշված բողոքը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 26.03.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/42 որոշմամբ բավարարվել է:

Ի կատարումն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի նշված որոշման՝ «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից հրավերում կատարվել են համապատասխան փոփոխությունները և դրանք հրապարակվել են www.gnumneram համացանցային կայքում:

Սակայն գնահատող հանձնաժողովը, խախտելով Օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները առ այն, որ բաց մրցույթի հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից, չի սահմանել հայտերի ներկայացման նոր վերջնաժամկետ:

Ավելին, նույն գնահատող հանձնաժողովի հրավիրված նույն օրվա նույն նիստում կատարել է բաց մրցույթի հրավերում փոփոխություններ և գնահատել մասնակիցների հայտերը:

Արդյունքում «Ազդ» ՍՊԸ-ն (ինչպես նաև հնարավոր այլ մասնակիցներ) զրկվել է նոր փոփոխված հրավերով հայտ ներկայացնելու իրավունքից, ինչի արդյունքում խախտվել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով մասնակցի գնման գործընթացին մասնակցելու իրավունքը:

Ավելին, «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է ոչ միայն Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, այլ նաև 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի և Օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

Արդյունքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքով ամրագրված այնպիսի հիմնարար սկզբունքներ, ինչպիսիք են գնման գործընթացի մրցակցային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, ինչպես նաև պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Վերոհիշյալ խախտման արդյունքում «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի յուրաքանչյուր չափաբաժնով հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից, և մրցակցության բացակայության պայմաններում յուրաքանչյուր չափաբաժնով մեկ հայտ ներկայացած մեկ մասնակցի կողմից առաջարկվել է նախահաշվային մաքսիմալ գնին գրեթե հավասար գին (օր. 15 մլն. դեպքում՝ հենց 15 մլն. գնային առաջարկ):

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Խորհուրդը իրավունք ունի պարտավորեցնելու գնահատող հանձնաժողովին ընդունել համապատասխան որոշումներ,

ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

«Ազդ» ՍՊԸ-ն 12.04.2018թ. գրությամբ Խորհրդին ներկայացրել է Բողոքի լրացում, որով հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Ազդ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 06.04.2018թ. ներկայացրած թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/54 բողոքը:

Վերոհիշյալ բողոքով 10.04.2018թ. հրավիրված նիստում պատվիրատուի՝ ՀՀ քաղաքապետարանի ներկայացուցիչները հայտնեցին, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անգործության ժամկետը ավարտվել է՝ 07.04.2018թ., ուստի Երևանի քաղաքապետարանի կողմից 07.04.2018թ. արդեն իսկ «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի արդյունքում կնքվել են պայմանագրեր:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ պայմանագիր կնքելու մասին որոշումը հաստատվել է մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից 2018թ. մարտի 27-ին (կցվում է): Նույն օրը, 2018թ. մարտի 27-ին պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում (արտատպումը կցվում է):

Վերոհիշյալ հայտարարության համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվելու է օրենքով սահմանված կարգով անգործության ավարտից հետո (10 օրացուցային օր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝

1. Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում նույն մասով նախատեսված հայտարարությունն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին՝ ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

2. Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

3. Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-ր մասի համաձայն՝ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

Ասպիսով, «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում 27.04.2018թ., ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-ր մասի համաձայն՝ անգործության ժամկետի սկիզբը պետք է հաշվարկվի պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից սկսած, այն է՝ անգործության սկիզբը սկսվելու է 28.04.2018թ.:

Նման պայմաններում անգործության վերջին 10-րդ օրն է հանդիսանում 06.04.2018թ. ներառյալ: Նշված փաստը հաստատել է նաև պատվիրատուն՝ բողոքի քննության նիստի ժամանակ:

Սակայն, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը ուղղակիորեն պահանջում է կնքել պայմանագիրը ոչ շուտ, քան նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

Մինչդեռ, պատվիրատուի կողմից «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի արդյունքում պայմանագիրը կնքվել է 07.04.2018թ., այսինքն, անգործության ժամկետի ավարտի հենց հաջորդ աշխատանքային օրը, ինչը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-ր մասի համաձայն՝ ուղղակիորեն արգելված է:

Գտնում ենք, որ այս քայլը («Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-ր մասի խախտումը) ՀՀ քաղաքապետարանի կողմից թույլ է տրվել, քանզի հենց 07.04.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից www.gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է «Ազդ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 06.04.2018թ. ներկայացրած թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/54 բողոքի վերաբերյալ հայտարարությունը և նույն հայտարարությամբ Խորհուրդը հայտարարել է, որ «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով

բաց մրցույթը կասեցված է: Ուստի որպեսզի կասեցումը չիրականացվի, պատվիրատուն Օրենքի խախտմամբ ժամկետից շուտ կնքել է նշված ծածկագրով պայմանագրեր:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

Այսպիսով, «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի արդյունքում կնքված պայմանագրերը անվավեր են, քանզի դրանք կնքվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ: Ուստի նման պայմաններում ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը իրավունք ունի պարտավորեցնելու ՀՀ քաղաքապետարանին լուծելու «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների կոպիտ խախտմամբ կնքված բոլոր պայմանագրերը:

Բացի այդ, «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պայմանագրի օրինակելի ձևի 7.3-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

Գտնում ենք, որ հենց «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պայմանագրի օրինակելի ձևի 7.3-րդ կետի ուժով Երևանի քաղաքապետարանը իրավունք ունի լուծելու նշված մրցույթի արդյունքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների կոպիտ խախտմամբ կնքված բոլոր պայմանագրերը:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ «Ազդ» ՍՊԸ-ի կողմից գնումների ոլորտի լիազոր մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացվել է պարզաբանում ներկայացնելու

խնդրանք, որին ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարությունը 06.04.2018թ. թիվ 03/27-1/6362-18 գրությամբ հայտնել է հետևյալը. «Հայտնում ենք, որ եթե գնման առարկայի բնութագրերի բողոքարկման արդյունքում բողոքարկման խորհրդի կողմից ընդունվել է հրավերում փոփոխություն կատարելու որոշում, նշված փոփոխությունը պետք է կատարվի «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում: Իսկ, եթե որոշումը կայացվել է այնպիսի ժամկետում, որը հնարավորություն չի տալիս հրավերում կատարել համապատասխան փոփոխություն, ապա գտնում ենք, որ տվյալ դեպքում ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ պետք է չկայացած հայտարարել գնման ընթացակարգը և հայտարարել նոր ընթացակարգ: Ինչ վերաբերվում է նրան, որ բողոք ներկայացվելու դեպքում էլեկտրոնային գնումների armeps համակարգում գնման ընթացակարգը չի կասեցվում, ապա հայտնում ենք, որ բողոքի առկայության դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման ընթացակարգը համարվում է կասեցված: Այսինքն, տվյալ դեքպում գնահատող հանձնաժողովը իրավասու չէ բացել ներկայացված հայտերը և գնահատել դրանք»:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը Խորհրդից խնդրել է.

1. Պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել նշված մրցույթը:

2. Պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանին լուծել վերջինիս կարիքների համար միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի արդյունքում 07.04.2018թ. կնքված բոլոր պայմանագրերը:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Լարիսա Հովակիմյանը:

2. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «Ազդ» ՍՊԸ-ի կողմից 06.04.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ 12.04.2018թ. թիվ 02/61-54568h գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կողմից մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթ, որի հայտերի բացման նիստը պետք է տեղի ունենար 19.03.2018թ., սակայն, հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 17.03.2018 թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/4838-18 գրությունը, կասեցվել է գնման գործընթացը մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Երևանի քաղաքապետարանը հիմք ընդունելով Խորհրդի կողմից կայացված թիվ ԳԲԽ–ԱՄ-2018/42 որոշումը՝ հրավերի տեխնիկական բնութագրերում կատարել է համապատասխան փոփոխություններ և այն հրապարակել է gnumner.am կայքում:

Ընկերության այն պնդումը, որ պատվիրատուի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, անհիմն է այն առումով, որ «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի հայտերի բացումը Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սահմանված էր 19.03.2018 թ. ժամը 10:00-ին, իսկ Խորհրդի որոշումը կայացվել էր 26.03.2018 թ.-ին, ուստի, armeps.am էլեկտրոնային համակարգում տեխնիկապես հնարավոր չէր կատարել համապատասխան փոփոխություններ և Օրենքի պահանջի համաձայն՝ սահմանել հայտերի ներկայացման նոր վերջնաժամկետ, քանի որ armeps.am էլեկտրոնային համակարգը հայտերի բացման օրը և ժամին ավտոմատ կերպով առաջադրանք է ստեղծում գնահատող հանձնաժողովի հայտերը բացող անդամներին և այդ պահից արգելափակում է այլ մասնակիցներին՝ հայտերի բեռնման հնարավորությունները:

Տեղեկացնում եմ նաև, որ Երևանի քաղաքապետարանը Օրենքով սահմանված անգործության ավարտի հաջորդող օրը՝ 07.04.2018 թվականին կնքել է համապատասխան պայմանագիր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մրցույթով սահմանված (Մայրության և գեղեցկության տոնին նվիրված) 1-ին չափաբաժնով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետն էր սահմանված 07.04.2018թ., որի կատարման վերջնաժամկետը հնարավոր չէր փոխել:

Վերը նշվածի համաձայն՝ սույն գնման ընթացակարգի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի կողմից ձեռնարկված քայլերը պայմանավորված էին նշված

հանգամանքներով, ուստի գտնում ենք, որ բողոքաբերի պահանջն անհիմն է և ենթակա է մերժման»:

Խորհրդի նիստերին մասնակցում էին Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Եղիշե Սարգսյանը և Իրինա Եղիազարյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/54 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Ազդ» ՍՊԸ-ի 06.04.2018թ. ներկայացրած բողոքը, 12.04.2018թ. գրությամբ ներկայացված բողոքի լրացումը և կից փաստաթղթերը, Պատվիրատուի 12.04.2018թ. թիվ 02/61-54568h գրությամբ հայտնած դիրքորոշումը, «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 19.03.2018թ. նիստի N 2 արձանագրությունը, ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 26.03.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/42 որոշումը.

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 26.03.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/42 որոշմամբ արձանագրված փաստական հանգամանքները՝ պարզեց հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Մրցույթի հայտերի բացման նիստը Ընթացակարգի հայտարարությամբ սահմանված է եղել 19.03.2018թ:

Մինչև մրցույթի հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 17.03.2018թ. «Ազդ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացվել է բողոք, որով վիճարկվել են «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պայմանագրի նախագծի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գման ժամանակացույցով սահմանված պայմանները:

«Ազդ» ՍՊԸ-ն 17.03.2018թ. Խորհրդին ներկայացրած բողոքով պահանջել է պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ չկայացած հայտարարել մրցույթը՝ 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով կամ պարտավորեցնել

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ փոփոխել նշված մրցույթի հրավերով սահմանված «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը»՝ 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով՝ համապատասխանեցնելով այն գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 26.03.2018թ. ընդունած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/42 որոշմամբ բավարարել է «Ազդ» ՍՊԸ-ի բողոքը: Խորհուրդը որոշել է պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին փոփոխել նշված մրցույթի հրավերով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով և այն համապատասխանեցնել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

Ի կատարումն Խորհրդի 26.03.2018թ. ընդունած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/42 որոշման՝ «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը 2018թ. մարտի 26-ի թիվ 11 որոշմամաբ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրերում կատարել է համապատասխան փոփոխություններ՝ 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով և նույն օրը կատարված փոփոխությունների վերաբերյալ հայտարարությունը հրապարակել է պաշտոնական տեղեկագրում:

Միևնույն ժամանակ, «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 26.03.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստին Հանձնաժողովն իրականացրել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթին ներկայացված հայտերի բացումը և գնահատումը՝ դրա վերաբերյալ կազմելով N 3 արձանագրությունը:

Այնուհետև, Հանձնաժողովը 27.03.2018թ. որոշմամբ հրապարակել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի 1-ից 8-րդ չափաբաժինների մասով պայմանագրեր կնքելու մասին որոշումը, որով հաստատվել են Ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի Հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները: Նույն հայտարարությամբ սահմանվել է անգործության ժամկետ՝ 10 օրացուցային օր:

07.04.2018թ. «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի արդյունքում պատվիրատուի կողմից կնքվել են պայմանագրեր՝ Ընթացակարգի բոլոր չափաբաժինների մասով:

Խորհրդին ներկայացված բողոքով «Ազդ» ՍՊԸ-ն Խորհրդին հայտնել է, որ գնահատող հանձնաժողովը խախտել է Օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, որով սահմանվել է, որ բաց մրցույթի հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից, և չի սահմանել հայտերի ներկայացման նոր վերջնաժամկետ: Բողոքաբերը հայտնել է նաև, որ Հրավերում փոփոխություններ կատարելու նույն օրը Հանձնաժողովի կողմից կատարվել է նաև բաց մրցույթի մասնակիցների հայտերի բացում և գնահատում, ինչի արդյունքում «Ազդ» ՍՊԸ-ն, ինչպես նաև Ընթացակարգի հնարավոր այլ մասնակիցներ, զրկվել է փոփոխված հրավերին համապատասխան հայտ ներկայացնելու հնարավորությունից, ինչով խախտվել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ Ընկերության գնման գործընթացին մասնակցելու իրավունքը: Միաժամանակ բողոքաբերը, ի լրումն «Ազդ» ՍՊԸ-ի 06.04.2018թ. բողոքի ներկայացված գրությամբ արձանագրել է, որ պատվիրատուի կողմից «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի արդյունքում պայմանագիրը կնքվել է անգործության ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ 07.04.2018թ.-ին՝ այսինքն, Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջի խախտմամբ:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը անհիմն համարեց Ընկերության այն պնդումը, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, քանի որ «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի հայտերի բացումը Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սահմանված էր 19.03.2018 թ. ժամը 10:00-ին, իսկ Խորհրդի թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/42 որոշումն ընդունվել էր 26.03.2018թ., ուստի, armeps.am էլեկտրոնային համակարգում տեխնիկապես հնարավոր չէր կատարել համապատասխան փոփոխություններ և Օրենքով նախատեսված պահանջի համաձայն՝ սահմանել հայտերի ներկայացման նոր վերջնաժամկետ, և ըստ Պատվիրատուի ներկայացուցչի, armeps.am էլեկտրոնային համակարգը հայտերի բացման օրը և ժամին ավտոմատ կերպով առաջադրանք է ստեղծում գնահատող հանձնաժողովի հայտերը բացող համապատասխան անդամների համար և այդ պահից արգելափակում է այլ մասնակիցների հայտերի բեռնման հնարավորությունը:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուի կողմից պայմանագրերի կնքման ժամկետներին, ապա, Պատվիրատուի ներկայացուցչի խոսքով, Երևանի քաղաքապետարանը Օրենքով սահմանված անգործության ժամկետի ավարտին հաջարդող օրը՝ 07.04.2018 թ. կնքել է համապատասխան պայմանագրեր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մրցույթով սահմանված՝ Մայրության և գեղեցկության տոնին նվիրված, 1-ին չափաբաժնով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետ էր սահմանված 07.04.2018թ., ինչը հասկանալի պատճառներով հնարավոր չէր հետաձգել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք)՝

- 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

- 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

- 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Բաց մրցույթի դեպքում փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում(...):

- 29-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բաց մրցույթի հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից:

- 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

• 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

• Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները:

• 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ Օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 3-րդ համաձայն՝ էլեկտրոնային ձևով գնումների կատարման դեպքում գործում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները՝ հաշվի առնելով նույն կարգով սահմանված առանձնահատկությունները:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ.

• «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը 2018թ. մարտի 26-ի թիվ 11 որոշմամաբ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրերում կատարել է համապատասխան փոփոխություններ՝ Ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով և նույն օրը կատարված փոփոխությունների վերաբերյալ հայտարարությունը հրապարակել է պաշտոնական տեղեկագրում:

• Հանձնաժողովը 27.03.2018թ. որոշմամբ հրապարակել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որով անգործության ժամկետ է սահմանվել 10 օրացուցային օր՝ 06.04.2018թ. ներառյալ:

• Պատվիրատուի կողմից «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի արդյունքում պայմանագրերը կնքվել են անգործության ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ 07.04.2018թ.-ին:

Խորհուրդը գտնում է, որ Խորհրդի կողմից ԳԲԽ-ԱՄ-2018/42 որոշումն ընդունվել է 26.03.2018թ., այսինքն, երբ Հրավերում փոփոխություն կատարելը ժամկետի առումով անհնար է եղել Խորհրդի իրավապարտադիր որոշման կատարումն ապահովելու նպատակով, հետևաբար Հանձնաժողովը պետք է չկայացած հայտարարեր «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթը և հայտարարեր նոր գնման ընթացակարգ՝ համապատասխան փոփոխություններ կատարելով Հրավերի տեխնիկական բնութագրում, քանի որ Օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հրավերում փոփոխություններ կարող են կատարվել հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ, իսկ 29-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բաց մրցույթի հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից:

Խորհուրդը գտնում է նաև, որ Երևանի քաղաքապետարանի կողմից վերը նշված ընթացակարգի շրջանակներում գնման պայմանագրերը Օրենքով սահմանված կարգով կարող էին կնքվել ոչ շուտ, քան նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան՝ 06.04.2018թ.-ին հաջորդող երկրորդ աշխատանքային օրը, այսինքն, ոչ շուտ, քան 08.04.2018թ., մինչդեռ վերը նշված պայմանագիրը կողմերի միջև կնքվել է 07.04.2018թ.-ին:

Հաշվի առնելով վերը նշված փաստական հանգամանքները, ինչպես նաև Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասով և 36-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ Խորհուրդը գտնում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում կնքված պայմանագրերն առոչինչ են:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետերով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ազդ» ՍՊԸ-ի կողմից 06.04.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83» ծածկագրով բաց մրցույթը չկայացած հայտարարելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ